

ԱՐԱԳԱԾԻ ԱՄՐԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Ն. Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Արագածի ամրոցը տեղադրված է էջմիածին քաղաքից ոչ շատ հեռու գտնվող Արագած գյուղի հարավային ծայրամասում¹։ Հնում ամրոցի շրջակայքում տարածվել է 30—40 հա բնակավայրը, որը ներկայումս ամբողջովին ավերված է։

Ամրոցի միջնաբերդը շուրջ 1500 քմ. տարածքով գտնվում է 15 մ. բարձրությամբ ժայռոտ ոչ մեծ բլուրի վրա։ Այն հատակադժու ուղղանկյուն՝ շորս անկյունային աշտարակներից և որմնահեծերից բաղկացած շինություն է։ Ամրոցի կառուցման համար բազալտե ելուստավոր ժայռաբեկորները կրտրրավել և հավասարեցվել են՝ ստեղծելով աստիճանաձև հարթակներ, իսկ բեկուսված ժայռաբեկորները օգտագործվել պատեր կառուցելու համար։ Հրասակ ընդգծվող հարթեղրած ժայռերի մնացորդները յուրօրինակ հիմք են հանդիսացել միջնաբերդի և նրա մեջ ընդգրկված շինությունները կառուցելու համար։

Չնայած Արագածում չկան աչքի ընկնող դարավանդներ, որոնք բնորոշ են բարբարոսական մի շարք ամրոցների և բնակավայրերի (Հայկաբերդ, Կայալի Դերե, Արգիշտիխինիլի, Արամուս, Օշական և այլն), բայց մի քանի թեքություն ունեցող հատվածներում, բացի հարթեղրած ժայռից, փորվել են աստիճանաձև անախիպ իջվածքներ, որն ապահովել է պատերը սողանքի ենթարկվելուց։

Արագածի միջնաբերդի պատերը շարված են տարբեր մեծությամբ կուպիտ մշակված քարաբեկորներով։ Նման ուղղադիտ շարվածքով է պայմանավորված միջնաբերդի հատակագծային ուղղանկյուն ձևը։

Արտաքինից ամրոցի և միջնաբերդի պարսպապատերը օժտված են որմնահեծերով, որոնք նույնպես տեղադրվել են ճեղքած, հարթեղրած ժայռաբեկորների վրա։ Որմնահեծերը, բացի պաշտպանական նշանակությունից ունեն նաև կոնստրուկտիվ (կառուցողական) հատկանիշ։ Խաղաղով ամրապատի դեր՝ վերջիններս հզոր պարիսպներն ապահովում են փլուզումից։ Այս փաստը ահնատու է հատկապես միջնաբերդի արևմտյան թևում, ուր որմնահեծերը առաջ են եկած հարթեղրած ժայռերի եզրերից 0,3—0,5 մ. -ով։ Միջնաբերդի պատերը շարված են երկկողմանի՝ զրահապատ քարե շարվածքով, որի միջուկը կազմված է մանր քարերով լցված կավե շաղախից։ Սրա վրայից բարձրացել է աղյուսե շարը, որը բնորոշ է Վանի թագավորության շինարարական տեխնիկային։

Ամրոցը, չնայած փոքր չափերին, կարևոր նշանակություն ունի Արարատյան դաշտավայրի ամրոցների պաշտպանական համակարգում։ Այն տեղադրվում է խոշոր քաղաքներ Արգիշտիխինիլի, Էրեբունու, Թյեյշեբախի միջև։

¹ Տե՛ս Գ. Գ. Ավետիսյան, Раскопки поселения Арагац, в кн., АО. М., 1968, էջ 487։

Աշխարհագրական դիրքը բավականին բարենպաստ է: Բյուրի գագաթից (նր-
կատի պետք է առնել նաև երկրորդ հարկը) հիանալի դիտվում է ոչ միայն
Արգիշտիխինի (20 կմ), Թեյշեբախին (18 կմ), այլև Օշականի² ամրոցը
(12 կմ): Տեսողական ազդանշանի միջոցով Օշականով կարելի է հաղորդա-
կից լինել Ձորափ, Փարպի, Դովրի, Արամուս ամրոցներին, որի հետևանքով
անմիջական է դառնում կապը Սևանի ավազանի բերդերի հետ: Այսպիսով,
պարզ է դառնում, որ Արագածի ամրոցը ուներ որոշակի նշանակություն
պաշտպանական ամրոցների համակարգում՝ Արարատյան դաշտավայրը և
բանուկ ճանապարհները պաշտպանելով Արագածի և այլ շրջանների հարձա-
կումներին: Այն ումրաշինական համակարգերի կարևորագույն ռազմավարա-
կան կետերից մեկն է:

Արագածի ամրոցը վաղուց գրավել է պատմաբանների և ճանապարհորդ-
ների ուշադրությունը: Ղ. Ալիշանի վկայությամբ Արագածը դիտարկել և գրը-
շանկադրել է ֆրանսիացի ճանապարհորդ Պուլե Լեկուզը 1647 թ.: Հետագայում
ամրոցը շփագրել է ճարտարապետ Թ. Թորամանյանը: Վաստակաշատ գիտ-
նականը միևնույն ժամանակ համեմատում է ամրոցի շփագրությունը Ղ.
Ալիշանի հրատարակած՝ Պուլե Լեկուզի գրշանկարի հետ՝ կատարելով վեր-
ջինիս վերլուծականը: Թ. Թորամանյանը, նշելով ամրոցի երկհարկանիությու-
նը, ցավոք չի տալիս դրա վերակազմությունը: Նա Արագածի ամրոցը դասեց
ուրարտական հուշարձանների շարքը: Այս եզրակացությունը համար հիմք հան-
դիսացավ ամրոցի ներքին ճարտարապետական ձևերի, մասնավորպես միջ-
նաբերդի, որպես գլխավոր կառույցի, հատկանիշների վերլուծությունը³:

1954—55 թթ. Արագածում հետախուզական պեղումներ կատարվեցին
Կ. Հովհաննիսյանի ղեկավարությամբ (շփագրությունները Շ. Ազատյանի)⁴:

Արագածի բնակավայրը ժամանակին օղակված էր հզոր պաշտպանական
պատերով, որոնցից պահպանվել են միայն շարվածքի ստորին քարերը: Զը-
նայած դրան, պատերի մնացորդները երևում էին առանձին հատվածներում:
Կ. Հովհաննիսյանը գտնում է, որ այն շրջապատել է ամբողջ բնակավայրը:

Արագածի բուն միջնաբերդը, ըստ Կ. Հովհաննիսյանի, երկհարկանի է
և ղել: Այդ միտքը գիտնականը հաստատում է նրանով, որ բոլոր լայնակի
պատերը կառուցվել են ճիշտ կողմնորոշմամբ՝ համապատասխանելով միջ-
նաբերդի երկրորդ հարկի նախագծմանը: Հարկերի միջև ծածկը իրականաց-
վել է գերանների օգնությամբ՝ կազմելով հարթ հողալիցքով տանիք: Վեր-
ջինիս համար հենակ են ծառայել գերանից սյուները: Հատկապես հետաքրքիր
է, որ Կ. Հովհաննիսյանին հաջողվել է վերականգնել ներկայումս չպահպան-
ված հում աղյուսի երկու ստանդարտ շփերը՝ 14,8×35,0×51,8 և 14,8×
51,8×51,8 սմ:

Արագածի վերաբերյալ հակիրճ նյութեր է հրատարակել Ա. Մարտիրոս-
յանը⁵, ընդհանրացնելով Արարատյան դաշտավայրի ուրարտական հուշար-
ձանների ուսումնասիրությունը, օգտվելով Թ. Թորամանյանի և հատկապես
Կ. Հովհաննիսյանի աշխատություններից⁶:

² Sh'u C. A. Есаян, А. А. Калантарян. Ошакан I. Ереван. 1938. էջ 5:

³ Sh'u Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Եր., 1942, էջ 33—34:

⁴ Sh'u K. Л. Оганесян, Урартское поселение в селе Арагац, ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, Եր., 1958, № 4, էջ 78—92:

⁵ Sh'u A. A. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Եր., 1964, էջ 234:

⁶ Sh'u Կ. Ղաֆադարյան, Արգիշտիխինի քաղաքի ճարտարապետությունը, Եր., 1984, էջ 61:

Արագած ամրոցի ուսումնասիրությանը զբաղվել է նաև Կ. Ղաֆաղարյանը, որն իր դիտարկումները շարադրել է «Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը» մենագրության մեջ: Նա զուգահեռներ է անցկացրել համաժամանակյա Վանի թագավորության հուշարձանների հետ:

1986—90 թթ. մեր կողմից կատարված աշխատանքների ընթացքում ամբողջովին պեղվեց միջնաբերդը, պարսպապատերը և մի քանի շինություն քաղաքի հատվածում:

Արագածի ամրոցը հատակագծում ուղղանկյուն է հյուսիս-հարավ կողմնորոշումով: Դիտարկումները ցույց տվեցին, որ առաջին արտաքին պարսպապատը հյուսիսից հալավ ձգվում է 114 մ., իսկ արևելքից արևմուտք՝ 82 մ.: Այսպիսով, նախնական տարածքը կազմում է շուրջ 1,2 հա.: Նշված պարսպապատի հարավային հատվածում հատուկ ընդգծվում են 3 մ. երկարությամբ, 0,85 մ. լայնությամբ իրարից 6,4 մ. հեռավորությամբ տեղադրված երկու որմնահեծեր:

Երկրորդ պարսպապատը նույնպես պահպանվել է մասամբ և ունի նույն կառուցողական հատկանիշները, որ բնորոշ են առաջինին: Պարսպապատերի միջև հեռավորությունը 12 մ. է: Այստեղ պահպանվել են առանձին շինությունների մնացորդներ, ինչպես նաև ազատ տարածություններ, որոնք թակի դեր են խաղացել: Պարսպապատերը, որպես կանոն, ունեն 2,6 մ. հաստություն և համապատասխանում են ուրարտական ստանդարտին:

Հաջորդ պարսպապատը անմիջականորեն օղակում է միջնաբերդը, ուր պեղվեց և ուսումնասիրվեց 21 կացարան, որոնք նկուղներ են, պահեստամթերանոցներ: Միջնաբերդի երկրորդ հարկը չի պահպանվել: Բուն միջնաբերդը ամրոցի նման կրկնում է տեղանքի գծագրությունը: Այս ուղղանկյուն, հյուսիսից հարավ ձգվող շինությունն ամրացվել և պաշտպանվել է շորս անկյունային հզոր աշտարակներով:

Միջնաբերդի արևմտյան պարսպապատը 48 մ. երկարությամբ ձգվում է հյուսիս-արևմտյան անկյունային աշտարակից դեպի հարավ-արևմտյանը 4,2 մ. հաստությամբ այս հզոր պարսպապատը՝ պահպանված բարձրությունը մինչև 3 մ., ամրացված է 4 որմնահեծերով: Վերջիններիս երկարությունը 3—4 մ. է, որոնք առաջ են գալիս 1 մ.-ով: Դրանք պաշտպանում են արևմտյան պարսպապատը և իրարից հեռանում 4—5 մ.-ով: Միջնաբերդի հարավային պարսպապատը 26,5 մ. երկարությամբ ընկած է արևմտյան և արևելեյան անկյունային աշտարակների միջև: Այն 4 մ. հաստությամբ կրկնում է վերոհիշյալ արևմտյան պարսպապատի շինարարական կոնստրուկցիան: Մեկ մետր առաջ եկող երկու հզոր, 4 մ. երկարությամբ որմնահեծերը ամրացնում են պարսպապատը: Որմնահեծերի միջև հեռավորությունը 6,5 մ. է: Միջնաբերդի հյուսիսային պարսպապատը համեմատաբար փոքր է: 13 մ. երկարությամբ և 3,5 մ. հաստությամբ այս պարսպապատը ձգվում է հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան աշտարակների միջև: Ի տարբերություն վերոհիշյալ պարսպապատերի՝ հյուսիսայինը ամրացված է երեք մետրանոց մեկ որմնահեծով, որը տեղադրված է պարսպապատի կենտրոնում՝ աշտարակներից հեռանալով 5 մետրով:

Միջնաբերդի արևելյան պարսպապատը ունի ավելի բարդ կառուցվածք: Տեղանքի գծագրությանը համապատասխան, այն բաժանված է երեք մասերի՝ ընդհանուր երկարությունը կազմելով 50 մ.: Պարսպապատի առաջին հատվածը՝ 21 մ., ամրացված է 4 մ. երկարությամբ որմնահեծով: Այստեղից հայտնաբերվեց երկթև «սկյութական» տիպի նետասլաք: Երկրորդ հատվածի երկարությունը 10,5 մ. է, իսկ երրորդինը՝ 18,5 մ.: Վերջին երկու հատված-

ները զուրկ են որմնահեծերից, որը պայմանավորվում է տեղանքի առանձնահատկություններով:

Արագածի պաշտպանական համակարգի կարևորագույն շինություններից է մուտքը: Ընդհանուր առմամբ բավականին յուրօրինակ կառուցվածք: Տեղադրված լինելով ամրոցի հարավ-արևմտյան հատվածում՝ այն ապահովում է միջնաբերդի անվտանգությունը: Ինքնատիպ այս շինությունը բաղկացած է երկու հատվածից: Առաջինը 16 մ. երկարությամբ, 3 մ. լայնքով դեպի միջնաբերդի պարսպապատը ձգվող թեքության վրա տեղադրված միջանցք է, որը ավարտվում է հյուսիս-արևմտյան աշտարակի հատվածում: Հենց այստեղ էլ բացվում է «դարպասի» տարածքը, որով ամբողջանում է այս ինքնատիպ համակարգը: Որոշակի ընդգծում ունեցող պաշտպանական նկատառումներով նախագծված, «ծուղակի» սկզբունքով կառուցված այս մուտքը իր հատակագծային լուծումներով տիպական է Վանի թագավորության⁷ շինարարական արվեստի համար:

Արագածի ֆորտիֆիկացիոն համակարգի մեջ չափազանց կարևոր նշանակություն ունեն միջնաբերդի անկյունային շորս աշտարակները: Դրանք շարված են զանգվածեղ, կիսակոպտատաշ քարաբեկորներից և տեղադրված են տարբեր հարթությունների վրա: Այսպես, հարավ-արևմտյան և հարավ-արևելյան աշտարակները կառուցված են ամենաստորին մակերեսի վրա, մինչդեռ հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյանները՝ 2—3 մ.-ով բարձր են: Վերջիններս շարված են բլուրի ժայռոտ ելուստների վրա: Աշտարակների պահպանված բարձրությունը տեղ-տեղ հասնում է 2,5 մ.-ի: Դիտարկումները ցույց են տալիս, որ այդ աշտարակների սկզբնական բարձրությունը պետք է հասներ 10 մ.-ի: Աշտարակներից երեքը հատակագծում ուղղանկյուն են, իսկ մեկը՝ հյուսիս-արևելյանը, քառակուսի: Դրանք միջնաբերդի պարսպապատերին համապատասխանաբար կից կառուցված շինություններ են: Հարավ-արևմտյան աշտարակը ուղղված է հյուսիս-հարավ: Այն հատակագծում ուղղանկյուն 10×9 մ. չափերով, հյուսիս և հարավ պարսպապատերից 4 մ.-ով առաջ եկող 1,8 մ. պահպանված բարձրությամբ շինություն է: Հարավ-արևելյան աշտարակը նույնպես ունի հարավ-հյուսիս կողմնորոշում: Հատակագծում ուղղանկյուն 4 մ.-ով պարսպապատերից հեռացող 10×8 մ. չափերի այս աշտարակի պահպանված բարձրությունը կազմում է 2 մ.: Հյուսիս-արևմտյան աշտարակը պարսպապատերից հեռանում է 4 մ.-ով: Այն ունի հյուսիսից արևելք կողմնորոշում, հատակագծում ուղղանկյուն է՝ 10×7 մ. չափերով, 2,2 մ. պահպանված բարձրությամբ: Վերջին՝ հյուսիս-արևելյան աշտարակը հատակագծում քառակուսի է՝ 100 քմ., 10×10 մ. չափերով: Հետաքրքիր է, որ հյուսիսային կողմով այն միջնաբերդի պարսպապատից հեռանում է 4 մ.-ով, իսկ արևելյանի թռիչքը 5,5 մ. է: Ներկայացված աշտարակի պահպանված բարձրությունը 1,3 մ. է:

Ամրոցի այսպիսի պաշտպանական համակարգի առկայությունը, անշուշտ, պայմանավորված է ուրարտական ամրաշինության կատարելությամբ: Տեղանքի ու ցիտնալ օգտագործումը և նախագծային լուծումները համապատասխանում են Վանի թագավորության շինարարության արվեստի ստանդարտին: Արագածի պարիսպների հատակագծային կոնկրետ մշակված ձևատիպաբանական հատկանիշները՝ ուղղագիծ պարսպի հաստությունը, միմյանց որոշակի հեռավորությամբ հաջորդող, մինչև 1 մետր առաջ եկող որմնահեծերը, աշտարակները բնորոշ են ոչ միայն Արարատյան դաշտավայրին, այլև

⁷ Տե՛ս Ե. Բ. Плотровский, Кармыр-бдур 3, Ереван, 1955, էջ 7:

ամբողջ Վանի թագավորությունը: Այն ավելի հարմար և տիպական է պետական բնույթ կրող տարածաշրջանին, երբ խոշոր շափերի կառույցները ապահովում են երկրի առաջնութացը իր գոյատևման ողջ ժամանակաշրջանում: Արագածի միջնաբերդի պարսիպները ունեն նույնատիպ հատակագծային ձևվեր, որոնք տարբերվում են մոտ մեկ դար առաջ կառուցված էրբուրնիի և Արգիշտիխիի միջնաբերդի պարսպատների տարածական ձևերից: Բընորոշ որմնահեծերից զատ, Արագածի միջնաբերդի պարսպները, ինչպես տեսանք, ամրացված են միմյանցից որոշակի հեռավորությամբ կառուցված անկյունային աշտարակներով: Ի տարբերություն էրբուրնիի, Արգիշտիխիի և Թեյշեբախիի, վերոհիշյալ շորս աշտարակները ելուստավորվում են պարսպատի արտաքին կողմից՝ կազմելով 4 մ., իսկ հյուսիս-արևելյան աշտարակի արևելյան թռիչքը 5,5 մ. է: Աշտարակների և որմնահեծերի նրման ներդաշնակ համադրությունը կարևորում է միջնաբերդի պաշտպանություն գործոնը: Որպես կանոն, Վանի թագավորության տարածքում Արագածի տիպի համեմատաբար փոքրածավալ հուշարձանները հանդես են գալիս ավելի ուշ: Արարատյան դաշտավայրի համալիրների ուսումնասիրությունը հաստատում է այդ տեսակետը: Բացառված չէ, որ Արագածը կառուցված լինի Ռուսա Երկրորդի (մ. թ. ա. 685—645) թագավորության շրջանում, որը հայտնի է իր շինարարական գործունեությամբ: Նրա օրոք Արարատյան դաշտավայրում վերակառուցվեցին և կառուցվեցին մի շարք քաղաքներ, ամրոցներ:

Քննարկվող հուշարձանի թվագրության խնդրի համար կարևոր նշանակություն ունի ոչ միայն ամրոցաշինական հատկանիշների վերլուծությունը, այլև հնագիտական գտածոների քննությունը:

Ինչպես միջնաբերդի 21 կացարաններից, այնպես էլ քաղաքային տեղամասերում պեղված շինություններից հայտնաբերվեցին մեծ քանակությամբ հնագիտական նյութեր: Ամենից առատը խեցեղեն գտածոներն են, որոնք տիպական են Վանի թագավորության խեցեգործական արտադրության համար: Դրանք հիմնականում տարբեր շափերի և ձևերի խեցանոթներ են՝ կարասներ, կճուճներ, թասեր, սափորներ և այլն: Գտնվել են բարձրորակ տոնական և ծիսական սպասքի առանձին օրինակներ, որոնք աչքի են ընկնում արտաքին հարդարմամբ, վարպետի նշաններով:

Մետաղյա գտածոները սակավ են. բրոնզե օղակ, գամ, երկթե «սկյուրական» տիպի նետասլաք և երկաթե ձողիկ: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են կարմիր և գորշ տուֆից սյուներ, կուռքեր, ֆալոսներ, որոնք ունեն պաշտամունքային նշանակություն:

Մեծ խումբ են կազմում բազալտե աղորիքները, կենդանիների ոսկորների մնացորդները: Առանձին խումբ են կազմում երկրորդ հարկից թափված որմնանկարների մնացորդները, որոնք զարդարել են վերին հարկի շինությունների պատերը: Ամրոցի թվագրումը հաստատագրվում է վերոհիշյալ հնագիտական նյութի և առանձին արտեֆակտների ուսումնասիրությամբ, որոնք իրենց լայն զուգահեռները ունեն Կարմիր բլուրում, Օշականում և մ. թ. ա. 7-րդ դարով թվագրվող մի շարք այլ հուշարձաններում:

Նյութերի նախնական քննարկումը՝ միջնաբերդի կացարանների թափ-

* Տե՛ս Կ. Ղաֆադարյան, Արգիշտիխիցիի քաղաքի ճարտարապետությունը, Եր., 1984, էջ 65:

* Տե՛ս Գ. Գ. Аветисян, Бнайская керамика из памятников Араратской долины, Եր., 1992, էջ 6—7:

ված, այդպիսի առաստաղների հետքերը, թերևս «սկյութական» նետասլաքի առկայությունը մեզ թույլ է տալիս որոշ վերապահումով ենթադրել, որ Արագածի ամրոցը կարող էր կործանվել հզոր հարձակումից: Այդ հարձակումը ամրակնում է մ. թ. ա. 7-րդ դարի վերջին, 6-րդ դարի սկզբին Արարատյան դաշտավայրի մի շարք հուշարձանների, այդ թվում նաև Կարմիր բլուրի ավերման հետ: Հավանական է, որ Արագածի ամրոցը երկար ժամանակ չի պաշարվել: Քշնամին, հանկարծակիի բերելով կայազորին, վճռական գրոհով գրավել, հրդեհել և ավերակների է վերածել միջնաբերդը:

Г. Г. АВЕТИСЯН — Фортификационные сооружения Арагаца. — В 1986—90 гг. нами полностью была раскопана цитадель крепости Арагац, которая дала определенное представление о сторожевых крепостях урартской фортификационной системы. Фортификационные сооружения крепости как по принципам постройки, так и по хронологии идентичны. Крепость, а также цитадель в плане прямоугольны. Стены цитадели толщиной до 3 м расчленены чередующимися контрфорсами. Вход находится в юго-западной части. Цитадель укреплена четырьмя угловыми башнями, которые играли важную роль для безопасности крепости. Строительная техника фортификационных сооружений цитадели Арагаца является типичной для всей урартской архитектуры. Этот интересный фортпост имеет промежуточное положение между Эребуни, Аргиштихинили, Тейшебаини и датируется VII в. до н. э.